ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
գործուղման արդյունքների մասին
/ՎԱՐՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ/

1. ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ Արուսյակ Հարությունյան

2. ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆ Արտաքին կապերի բաժնի պետ

3. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, Սուրբ Կյուրեղի և Մեթոդիոսի անվան Վելիկո Տիռնովոյի համալսարան, Բուլղարիա, նոյեմբերի 13-17 2023թթ.

4. ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ՝ Սուրբ Կյուրեղի և Մեթոդիոսի անվան Վելիկո Տիռնովոյի համալսարան

5. ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ՝ Միջբուհական համագործակցություն

6. ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ ՝ Միջբուհական համագործակցության հնարավորությունները Սերբիայի, Ռումինիայի, Լեհաստանի և Պորտուգալիայի համալսարանների հետ

7. ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ
Մասնակցեցի համալսարանի կողմից կազմակերպված միջազգային վերապատրաստման շաբաթին, որին մասնակցում են շուրջ 20 օտարերկրյա համալսարանի 50 ներկայացուցիչ:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ
Վերապատրաստման ընթացքում ներկայացրեցի ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնը, ինչպես նաև մասնակից բուհերի ներկայացուցիչների հետ քննարկումներ վարեցի հետագա համագործակցության շուրջ: Սուրբ Կյուրեղի և Մեթոդիոսի անվան Վելիկո Տիռնովոյի համալսարանի ռեկտորի հետ հանդիպման ընթացքում որոշում կայացվեց կնքել նաև համագործակցության պայմանագիր, բացի միջինստիտուցիոնալ համաձայնագրից՝ այսպիսով ամրապնդելով այս նոր համագործակցության ինստիտուցիոնալ հենքերը: Նաև մասնակցել եմ Արտաքին/միջազգային կապերի դեպարտամենտի աշխատակիցների հանդիպման, որտեղ քննարկվել են ներքին համագործակցության հարցեր և հստակեցվել են համագործակցության մեխանիզմները և հաղորդակցության ուղիները:
Բացի այդ մասնակցել եմ Սուրբ Կյուրեղի և Մեթոդիոսի անվան Վելիկո Տիռնովոյի համալսարան Կրթության դեպարտամենտում կազմակերպվող շրջայցին, որի շրջանակներում քննարկեցինք հետագա համագործակցության հնարավորությունները «Սոցիակայան մանկավարժություն» ՄԿԾ-ի շրջանակներում: Էրազմուս+ միջազգային կրեդիտային շարժունության շրջանակներում համագործակցությունը հնարավոր է համալսարանների/բուհերի հետ՝

Babes Bolyai University of Cluj Napoca, Ռումինիա՝
https://cci.ubbcluj.ro/erasmus/incoming-students/mobilityinformation/

“Alexandru Ioan Cuza” University of Iaşi, Ռումինիա՝
https://www.uaic.ro/en/studies/degrees-on-offer-in-english-and-french/#9e18f224d6df78435

Տեմիշոարայի արևմտյան համալսարան (Universitatea de Vest din Timişoara), Ռումինիա՝
https://ri.uvt.ro/programul-de-mobilitati-erasmus/erasmus-incoming-studenti/ects-info-packs-courses-at-wut/

Պրեշովի համալսարան, Սլովակիա՝
https://www.unipo.sk/en/iro/courses/

Vilnius Gediminas Technical University (VILNIUS TECH), Լիտվա
https://vilniustech.lt/studies/study-programmes/list-of-courses-offered-for-exchange-students/323342
https://vilniustech.lt/files/5058/252/12/0_0/VILNIUS%20TECH%202023-2024%20spring.htm
Ֆինանսավորման առկայության դեպքում հնարավոր է համագործակցել մի շարք այլ ոչ եվրոպական համալսարանների հետ:

9. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ, ԱՄՍԱԹԻՎԸ

Աշխատող
Արուսյակ Հարությունյան «20» նոյեմբերի 2023թ.

Կառուցվածքային ստորաբաժանման ղեկավար
«20» նոյեմբերի 2023թ.